

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ Ս. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԴՐՈՇՄԻ ՄԱՍԻՆ

1) Ի՞նչ է Ս. մկրտութիւնը:

Ս. մկրտութիւնը ընդհանրական եկեղեցւոյ սրբազան խորհուրդներէն է, որու միջոցով մարդ կը մաքրուի ազամական կամ սկզբնական մեղքէն եւ մինչ այդ գործած բոլոր մեղքերէն, կը դառնայ քրիստոնեայ, Քրիստոսի եկեղեցւոյ մարմին եւ անդամ, կ'ըլլայ երկնաւոր հօր որդեգիր, Քրիստոսի ժառանգակից եւ Ս. հոգիի տաճար:

Անիկա յաճախ կ'անուանեն նաեւ «մուտքի» խորհուրդ: Քանզի առանց մկրտուելու, ոեւէ մէկը չի կրնար մասնակցիլ եկեղեցւոյ միւս խորհուրդներուն: Ս. մկրտութիւնը անկրկնելի խորհուրդ է եւ նուիրական պահ մը ամէն մարդու կեանքին մէջ, որ կը պատահի միայն մէկ անգամ:

Աստուածահաստատ այս խորհուրդը եկեղեցի մտնելու դուռն է: Առաջին քայլը, որմէ կը սկսի մարդուն հոգեւոր կեանքը:

Ս. մկրտութիւնը այն սահմանագիծն է, որը կը բաժնէ եկեղեցւոյ մէջ գտնուողները՝ միւսներէն: Անիկա մարդոց կամ հոգեւորականներուն կողմէ հնարուած ծիսակատարութիւն կամ երկրորդական բան չէ, այլ՝ Քրիստոսի եկեղեցիին անդամակցելու եւ քրիստոնեայ դառնալու գլխաւոր նախապայմանը: Ուստի, ինչ որ Աստուած անհրաժեշտ նկատած է մեզի համար եւ պատուիրած, հարկ է որ կատարենք:

ԱՂԱՆԴԱՒՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

ԲԱՍԸԼԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄԱԿԱՆԸ

Ձգուշագէ՛ք սուր մարգարէներէն, որոնք ոչխարի կերպարանքով կը մօտենան չեզի, մինչ ներքնապէս յաւիշտակիչ գայլեր են: (Մկր. 7.15)

3-ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐԴԻՆ՝ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Աստուածաշունչը յատկօրէն կ'ըսէ, թէ Յիսուս իր ՆՈՅՆ ՄԱՐՄԻՆՈՎ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՒ: Կարգա՛նք Ղուկասու Աւետարանէն. «Երբ առաքեալները այս բաները կը խօսէին, Յիսուս ինք կանգնեցաւ անոնց մէջտեղ եւ ըսաւ. «Խաղաղութի՛ւն ձեզի»: Բայց անոնք զարհուրելով կը վախնային, ու կը կարծէին՝ թէ ոգի մը կը տեսնեն: Եւ ըսաւ անոնց. «Ինչո՞ւ խռոված էք, եւ ինչո՞ւ սիրտերնուդ մէջ խորհուրդներ կ'ելլեն: Տեսէ՛ք Ձեռնաբերս ՈՒ ՈՏՔԵՐՍ, ՈՐ ԵՍ ԻՆՔՍ ԵՄ. ՇՕՇԱՓԵՑԻ՛Ք ՁԻՍ ՈՒ ՏԵՍԷ՛Ք, ՈՐՈՎ՛ՀՏԵՒ ՈԳԻՆ ՄԱՐՄԻՆ ԵՒ ՈՍԿՈՐՆԵՐ Զ՛ՈՒՆԵՆԱՐ, ԻՆՉՊԷՍ ՁԻՍ ԿԸ ՏԵՄՆԷ՛Ք ՈՐ ՈՒՆԻՄ»: Եւ ասիկա ըսելով՝ ձեռքերն ու ոտքերը ցոյց տուաւ անոնց» (Ղուկ. 24.36-40): Դարձեալ, շաբաթ մը ետք կրկին երեցաւ աշակերտներուն, թերահաւատ Թովմասին ըսաւ. «Մտո՞ղ հոս բե՛ր եւ նայէ՛ իմ ձեռքերուս, ու բե՛ր ձեռքդ իմ կողս խոթէ՛» (Յովհ. 20.27): Հոգեղէն մարմին մը շօշափել՝ կարելի պիտի չըլլար բնա՛ւ, մինչդեռ Յիսուսի երկրաւոր մարմինն էր որ յարութիւն առած էր՝ նո՛ր յատկանիշներով:

Միբելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak ճրագ թերթ



ԲՈՒ ԽՕՍԲԴ ԽՄ ՈՏԹԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

ԺԱ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 25 ՄԱՐՏ 2018 ԹԻՒ 12

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄԵՐ Երգ. 1.1-2.3: 2ք 9.9-15: Փլպ. 4.4-7 ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԵՆՍ 20.29-21.17

ԾԱՂԿԱԶԱՐԷ

Երբ Յիսուս եւ իր աշակերտները Երիքովէն դուրս կ'ելլէին, մեծ բազմութիւն մը հետեւեցաւ իրեն: Ճամբու եզերքին մատած երկու կոյրեր, երբ լսեցին որ Յիսուս կ'անցնի, սկսան աղաղակել. «Ողորմէ՛ մեզի, Յիսուս, Դաւիթի որդի»: Ժողովուրդը սաստեց անոնց որպէսզի լռեն, բայց անոնք աւելի բարձր ձայնով շարունակեցին աղաղակել.

«Ողորմէ՛ մեզի, Տէ՛ր, Դաւիթի որդի»: Յիսուս կանգ առաւ, իր մօտ կանչեց կոյրերը եւ հարցուց. «Ի՞նչ կ'ուզէք, որ ընեն ձեզի»: Անոնք պատասխանեցին. «Տէ՛ր, թող մեր աչքերը բացուին»: Յիսուս գրաց եւ անոնց աչքերուն դպաւ: Կոյրերը անմիջապէս սկսան տեսնել եւ հետեւեցան իրեն:

Երբ Երուսաղէմի մօտեցան եւ հասան Բեթփազէ, Չիթենեաց լերան կողին, Յիսուս իր աշակերտներէն երկուքը դրկեց՝ անոնց պատուիրելով. «Գացէ՛ք սա դիմացի գիտը եւ անմիջապէս հոն կապուած էշ մը պիտի գտնէք իր աւանակին հետ: Զակեցէ՛ք եւ ինծի բերէք: Եթէ մէկը առարկէ, ըսէ՛ք. "Տէրը անոնց պէտք ունի", եւ անմիջապէս թոյլ պիտի տայ ձեզի»: Ասիկա պատահեցաւ, որպէսզի իրականացայ մարգարէին խօսքը. «Երուսաղէմի ըսէ՛ք. Ահա քու թագաւորդ թեզի կու գայ: Անիկա հեզ է, նստած իշու մը աւանակին վրայ»:

Աշակերտները գացին եւ կատարեցին, ինչ որ Յիսուս պատուիրեց իրենց: Բերին էշն ու աւանակը եւ իրենց հագուստները անոնց վրայ դրին: Ապա Յիսուս նստաւ աւանակին վրայ: Ժողովուրդէն շատեր իրենց հագուստները կը փռէին ճամբուն վրայ, ուրիշներ ծառերէն ռստեր կը կտրէին եւ կը տարածէին ճամբուն վրայ: Եւ ամբողջ բազմութիւնը, որ թափօրին մէջ Յիսուսի առջեւն կ'երթար կամ կը հետեւէր իրեն, կ'աղաղակէր. «Օրհնութի՛ւն Դաւիթի որդիին, օրհնեալ է ան որ կու գայ Տիրոջ անունով: Օրհնութի՛ւն Բարձրեալին»:

Երբ Յիսուս Երուսաղէմ մտաւ, ամբողջ քաղաքը դրդեցաւ: «Ո՞վ է ասիկա», կը հարցնէին քաղաքի բնակիչները. եւ ամբողջ կը պատասխանէր. «Ասիկա Յիսուս մարգարէն է, Գալիլիայի Նազարէթ քաղաքէն»:

Ապա Յիսուս տաճար մտաւ եւ դուրս վնտեց բոլոր անոնք՝ որոնք տաճարին մէջ առուծախ կ'ընէին. լումայափոխներուն սեղանները եւ աղանձվաճառներուն աթոռները շրջեց եւ ըսաւ անոնց. «Սուրբ Գիրքերուն մէջ գրուած է. "Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի", մինչ դուք գայն աւազակներու որջի վերածած էք»: Տաճարին մէջ Յիսուսի մօտեցան կոյրեր եւ կաղեր եւ ան բժշկեց զանոնք: Երբ քահանայապետներն ու դպիրները տեսան Յիսուսի կատարած հրաշքները եւ լսեցին աղաղակը մանուկներուն, որոնք տաճարին մէջ կը գոչէին. «Օրհնութի՛ւն Դաւիթի որդիին», բարկացան եւ Յիսուսի ըսին. «Կը լսե՞ս ինչ կ'ըսեն անոնք»: Յիսուս պատասխանեց. «Այո՛, չէ՞ք կարդացած Սուրբ Գիրքին սա խօսքը, թէ "Մանուկներու եւ կաթնկեր երեխաներու բերնով գովեստ հիստեցիր"»:



Մեծ պահոց վերջին Կիրակին կը կոչուի ԾԱՂԿԱՉԱՐԳ:

Ծաղկագարդը մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի հանդիսաւոր մուտքն է Երուսաղէմ: Երբ Յիսուս աւանակին վրայ նստած մուտք կը գործէ Երուսաղէմ, ժողովուրդը խանդավառ ընդունելութիւն ցոյց կու տայ անոր: Ձիթենիի եւ արմաւենիի երկուքով կը դիմաւորեն զինք եւ նոյնիսկ իրենց հագուստները կը փոեն գետին, որպէսզի Յիսուս անցնի անոնց վրայէն:

Երբ Յիսուս տանար կը մտնէ կը տեսնէ, որ շուկայի վերածուած է ան: Անմիջապէս կը մաքրէ տանարը ու բոլորին կը հասկցնէ, որ տանարը միայն աղօթքի համար կը գործածուի:

Ծաղկագարդի Շաբաթ երեկոյեան, ժամերգութեան ընթացքին կը բացուի քառասուն օրեր փակ մնացած խորանը: Ծաղկագարդի օրը Անդաստանի ժամանակ կ'օրհնուին ձիթենիի երկուքով եւ հաւատացեալները օրհնուած ձիթենիի ոստերը տուն կը տանին:

Յատկանշական է Ծաղկագարդի թափօրը, որուն կը մասնակցին բոլոր մանուկներն ու երեխաները զարդարուն ու գունաւոր մովերով:

ԱՄԱԳ ՇԱԲԱԹ

Ս. Յարութեան Տօնը, որ այս տարի կը գուգադիպի Ապրիլ 1-ին՝ նախորդըւած է Յիսուսի կեանքի վերջին դրուագները յիշեցնող եկեղեցական հանդիսութիւններու ամբողջ շաբաթով մը: Այդ շաբաթը կը կոչուի Ա.Ի.Ա.Գ ՇԱԲԱԹ, որ կը նշանակէ ամենէն մեծը, ամենէն բարին ու սուրբը: Այդ շաբաթուան իւրաքանչիւր օրը եւս կը կոչուի աւագ՝ ինչպէս Աւագ Երկուշաբթի, Աւագ Երեքշաբթի, Աւագ Չորեքշաբթի, Աւագ Հինգշաբթի, Աւագ Ուրբաթ, Աւագ Շաբաթ, իսկ Կիրակին Ս. Յարութեան օրն է: Յիշուած օրերէն իւրաքանչիւրը կը յիշատակէ Յիսուսի կեանքէն առնուած մասնայատուկ դրուագ մը ու եկեղեցական խորհրդանշական արարողութիւններ կը մատուցուին անոնցմէ իւրաքանչիւրին:

ՊԷՏՔ Է ՄԻՇՏ ԱՂՕԹԵՆՔ ԱՌԱՆՅ ՎՀԱՏԵԼՈՒ ՄԻԱՄՆԱԲԱՐ ԱՂՕԹԵՆՔ
Տէ՛ր իմ եւ Աստուած իմ Դ-ո՛ւն ես իմ օգնականս, Զու ձեռքիդ մէջ եմ ես: Դ-ո՛ւն զիտես իմ օգուտս, օգնէ՛ ինձի, մի՛ թողուր որ մեղանչեմ Զեզի հանդէպ, քանի որ մոլորած եմ չար դէտերու կողմէ: Մի՛ թողուր, որ հետեւիմ սեփական կամքիս ու կորսուիմ մեղքերուս մէջ, այլ գթա՛ ինձի Զու ձեռքի ստեղծածիդ: Մի՛ վտարեր զիս, Տէ՛ր, քու այքէդ եւ Սուրբ Հոգիդ մի՛ հաներ ինձմէ: Եփրեմ Ասորի

ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

Սիրելի եղբայրներ, ամէն մարդ թող արագ ըլլայ լսելու եւ ծանր՝ խօսելու եւ բարկանալու մէջ, որովհետեւ մարդուն բարկութիւնը Աստուծոյ արդարութիւնը կը հեռացնէ: *Յակ. 1.16-20*

Սիրելիներ, ճանչնալէն ետք բարկութեան չարիքները եւ մանաւանդ գիտնալէ ետք, թէ ինչպիսի բարիքներէ պիտի զրկուինք երբ Աստուծոյ արդարութենէն բաժնուինք, զգոյշ ըլլանք մեր անձերուն նկատմամբ ու հեռանանք բարկութենէն եւ անոր չարութենէն, ինչպէս կատաղի գազանէ մը: Չըլլայ, թէ իժի պէս մեր մէջ բոյն դնելով վնասէ մեր հոգիներուն, խայթէ մեր կրունկը եւ հեծեալը գետին ձգէ: Եթէ Աստուծոյ այլ դատաստանները եւ վրէժխնդրութիւնը բարկացողներուն չէին, զէթ մարդոցմէ պէտք էր շառագունիլ ու դողալ, եւ ոչ թէ գազանի նման անընտել եւ բոլորին ծաղրանքի առարկայ ըլլայ: Օձերու եւ կարիճներու բնութիւնն է միշտ գազանութեան մէջ մնալը: Անոնք որոնք որ մօտենան կը գարնեն, կը վիրաւորեն եւ այդ պատճառաւ բոլորին ատելի են եւ ամէն ոք իր ձեռքը կը զինէ գանոնք սպաննելու: Անոնք մի՛ նմանիր դուն, որ բանաւոր եւ իմաստուն ես: Անոնք բռնութեամբ ունին գազանութիւն, այդպէս ստեղծուած ըլլալով Արարիչէն: Սակայն դուն նոյնպէս չստեղծուեցար, այլ՝ իմաստուն, հեզ եւ հանդարտ: Ինչո՞ւ համար բնութենէդ դուրս գալով կամովին կը նմանիս անոնց գազանութեան: Անոնք իսկ շատ անգամ մարդոցմէ զիւթուած իրենց բնութենէն դուրս գալով ոչ ոքի կը վնասեն: Մինչ քու բարկութիւնդ, ո՛չ աղաչական անոյշ խօսքերը, ո՛չ բարեկամներու աղերսանքները, ո՛չ սիրելիներու խրատը, ո՛չ Աստուծոյ վախը եւ ո՛չ ալ գեհենի սպառնալիքը կը մեղմացնեն, այլ՝ որոնք որ մօտենաս կը գարնես ու կը վիրաւորես:

ԿԸ ՀԱՒԱՏԱՆՔ...

«ՈՐ Է ՁԵՐ ՀԱՒԱՏՔԸ»

«Ո՛ւր է ձեր հաւատքը» (Ղկ. 8.25): Յիսուս այս հարցումը ուղղեց իր աշակերտներուն երբ անոնք ծովուն վրայ փոթորիկ մը դիմագրաւելով՝ խոովեցան ու վախցան: Դիւրին է հաւատալ, երբ փորձութիւններ բացակայ են մեր կեանքէն: Դիւրին է հաւատալ, երբ ամէն ինչ հեզասահ ու խաղաղ կ'ընթանայ մեր կեանքին մէջ: Բայց ո՛ւր է մեր հաւատքը, երբ փորձութիւնները մեզ կը շրջապատեն: Ո՛ւր է մեր հաւատքն ու համոզումը թէ մենք Քրիստոսի մէջ է որ կը հանգչինք, եւ թէ Քրիստոս ի՛նքն է դեկավարը եւ առաջնորդը մեր կեանքի մաւերուն: Նեղութեան ընթացքին իրար անցնիլն ու մտահոգուիլը, Քրիստոսի ղեկավարութեան եւ առաջնորդութեան կարողութիւնը կասկածի տակ առնել կը նշանակէ:

Վստահի՛ր Աստուծոյ: Ան, որ հացն է կեանքին չի՞ կրնար կերակրել հոգիդ: Ան, որ աղբիւրն է կեանքին՝ չի՞ կրնար յագեցնել ծարաւը սրտիդ: Ան, որ տիեզերքը իր ձեռքերուն մէջ բռնած է, չի՞ կրնար ապահով ձեռով իր փիւն մէջ պահել: Այո՛ կրնայ: Ուրեմն վստահե՛՛ք իրեն: Երբ վստահիս Աստուծոյ՝ անկազ զինք քեզ պաշտպանելու համար պիտի մղէ:

Ս. ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻՆ ԱՅՍՊԷՍ ԱՂՕԹԵՑ ՄԵՆՔ ԱԼ ՄԻԱՆԱՆՔ ԱՂՕԹԻՆ

Դուն որ բոլորին պահապանն ես, Քրիստոս, թող աչդ հովանի՛ ըլլայ վրաս՝ գիշեր ու ցերեկ, տան մէջ նստած՝ թէ նամբան գալած ատենս, քնացած՝ թէ արթնցած ատենս, որպէսզի երբե՛ք չսասանիմ: Եւ ողորմե՛՛ք քու արարածներուդ եւ ինձի՛՝ բազմամեղիս: